ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**No 211-Ա/2** **«24» հունվարի, 2025 թ.**

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ 2025» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ**

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

**ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

*Հավելված N 1*
*ՀՀ ԿԳՄՍ նախարարի*
*2025թ. հունվարի 24-ի*
*N 211-Ա/2 հրամանի*

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**) կազմակերպում է **«Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025»** մրցույթը (այսուհետ՝ **Մրցույթ**):

**Մրցույթն** ուղղված է ռազմարդյունաբերության մեջ օգտագործվելու ներուժ ունեցող երկակի նշանակության գիտահետազոտական աշխատանքները խթանելուն, երկակի նշանակության նոր տեխնոլոգիաների ստեղծմանը և դրանց պատրաստիության մակարդակի բարձրացմանն աջակցելուն, ռազմական արտադրության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների կիրառմանը նպաստելուն, գիտական և ռազմարդյունաբերական գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցությունը զարգացնելուն:

Մրցույթի մասնակցության հայտը լրացնում և ներկայացնում է գիտահետազոտական խմբի ղեկավարը **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի միջոցով (https://grants.hesc.am)՝ մինչև **2025 թվականի փետրվարի 28-ը**: Հայտերի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է **Կոմիտեի** պաշտոնական ինտերնետային կայքում (http://hesc.am):

Պահանջվող փաստաթղթերը **Կոմիտե** են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ) մինչև **2024 թվականի մարտի 7-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեի** բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 18:00, հեռ.՝ +374 10 210 140 (105):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության
կոմիտե

*Հավելված N 2*
*ՀՀ ԿԳՄՍ նախարարի*
*2025թ. հունվարի 24-ի*
*N 211-Ա/2 հրամանի*

# ՀՐԱՎԵՐ
# «ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ 2025» ՄՐՑՈՒՅԹԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1. Մրցույթը**

**1.1.** «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025» մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2025 թվականի հունվարի 24-ի N 211-Ա/2 հրամանի:

**1.2.** **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով»:

**1.3.** **Մրցույթն** ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում երկակի նշանակության հետազոտությունների իրականացմանը և այդ ոլորտում կարողությունների ամրապնդմանն ու զարգացմանը:

**1.4.** **Մրցույթն** իրականացվում է Հավելված N 2.1-ում նշված գիտական և գիտատեխնիկական գործունեության ուղղություններով:

**1.5.** **Մրցույթին** մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ (այսուհետ՝ **Հայտ**), որը ներառում է գիտական նախագիծ (այսուհետ՝ **Նախագիծ**) և պահանջվող այլ փաստաթղթեր/տվյալներ:

**1.6.** **Նախագիծը** (Հավելված N 2.2) պետք է լինի հեռանկարային, իրագործելի և կիրառելի ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական կարիքների համար:

**1.7.** **Մրցույթի շրջանակներում** միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրապարակում (այսուհետ՝ **ՄԳՇ** հրապարակում) է համարվում Վեբ օֆ Սայնս

(Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկված հոդվածը (article), ակնարկը (review), նամակը (letter), գիտաժողովի նյութը (Conference Paper, Procedings Paper) կամ գրքի գլուխը (book chapter):

**1.8.** **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու ընթացակարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման փուլերը և շահառու **Հայտերի** ֆինանսավորման ու հաշվետվողականության ընթացակարգը:

## 2. Նպատակը

**2.1.** **Մրցույթի** նպատակներն են.

- խթանել ռազմարդյունաբերության մեջ օգտագործվելու ներուժ ունեցող երկակի նշանակության գիտահետազոտական աշխատանքները,
- աջակցել երկակի նշանակության նոր տեխնոլոգիաների ստեղծմանը և դրանց պատրաստիության մակարդակի բարձրացմանը,
- նպաստել ռազմական արտադրության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների կիրառմանը,
- զարգացնել գիտական և ռազմարդյունաբերական գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցությունը,
- երկակի նշանակության գիտահետազոտական աշխատանքներում ներգրավել երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների:

## 3. Ժամկետները

**3.1.** **Նախագծի** իրականացման տևողությունը 24 ամիս է:

**3.2.** **Մրցույթին** առցանց դիմելու վերջնաժամկետը **2025 թվականի փետրվարի 28**-ն է: **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (grants.hesc.am, այսուհետ՝ **Համակարգ**) **Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

**3.3.** Թղթային տարբերակով **Կազմակերպության** ներկայացուցչի կողմից **Կոմիտե** հանձնվող փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը **2025 թվականի մարտի 7**-ն է:

**3.4.** **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ֆինանսավորման մեկնարկը նախատեսվում է 2025 թվականի հուլիս ամսից:

**3.5.** **Նախագծերի** ֆինանսավորման համար պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքների հրապարակումից հետո՝ 10-օրյա ժամկետում:

**3.6.** Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրն է:

**3.7.** **Նախագիծն** իրականացվում է պայմանագրում նշված ժամկետներում:

## 4. Գիտահետազոտական Խումբը

**4.1.** **Նախագիծը** մշակում և իրականացնում է 4-7 անձից բաղկացած գիտահետազոտական խումբը (այսուհետ՝ **Խումբ**), որը կազմված է **Խմբի** ղեկավարից (այսուհետ՝ **Խմբի ղեկավար**) և կատարողներից (այսուհետ՝ միասին՝ **Խմբի անդամներ**):

**4.2.** **Խմբում** պետք է ընդգրկվի առնվազն 2 աշխատակից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող որևէ կազմակերպությունից (պետական գիտական կազմակերպություններ կամ բուհեր) և առնվազն 2 աշխատակից՝ Ռազմարդյունաբերական համալիրի որևէ կազմակերպությունից[1]:

**4.3.** **Խումբը** վերջին 5 տարիների համար գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում պետք է ներկայացնի **Հավելված 2.1-ով** ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների մասնագիտություններով առնվազն 4 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:

**4.4.** Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հրապարակում ներկայացնելու դեպքում **Հայտը** գիտական փորձաքննության ենթարկելու հարցը լրացուցիչ կքննարկվի:

**4.5.** **Խմբի** անունից հանդես է գալիս միայն **Խմբի ղեկավարը**:

---

[1] **Նախագծի** իրականացման աշխատանքներին մասնակցում են առնվազն երկու կազմակերպություն, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող է (պետական գիտական կազմակերպություններ կամ բուհեր), իսկ մյուսը՝ Ռազմարդյունաբերական համալիրից է: Նշված յուրաքանչյուր կազմակերպությունից **Խմբում** պետք է ընդգրկված լինի երկուական աշխատակից: 4 անձից ավել անդամներ ունեցող խմբում, մյուս անդամները կարող են լինել ինչպես նշված երկու կազմակերպություններից, այնպես էլ այլ գիտական կազմակերպություններից կամ բուհերից:

## 5. Խմբի ղեկավարը

**5.1.** **Հայտը** ներկայացնում է **Խմբի ղեկավարը**:

**5.2.** **Խմբի ղեկավար** կարող է լինել այն անձը, ով՝

- ծնվել է 1955 թվականի հունվարի 1-ից հետո,
- ունի գիտական աստիճան կամ նախկինում ղեկավարել է հայտով ներկայացվող բնագավառին առնչվող երկակի նշանակության գիտահետազոտական կամ փորձակոնստրուկտորական նախագիծ և ներկայացնում է այդ փաստը հավաստող փաստաթղթեր Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեից (այսուհետ՝ **ՌԱԿ**) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից:
- ունի առնվազն երեք տարվա գիտական կամ ճարտարագիտական գործունեության աշխատանքային ստաժ **Հավելված N 2.1-ով** ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով:

**5.3** **Խմբի ղեկավարը** պատասխանատու է **Խմբի** ձևավորման և **Նախագծի** իրականացման ընթացքի համար:

## 6. Խմբի անդամները

**6.1.** **Խմբի անդամները Հայտ** ներկայացնելու փուլում կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ:

**6.2.** **Խմբի անդամները Նախագծի** իրականացման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև **Նախագծի** իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

**6.3.** **Խմբի անդամներից** առնվազն երկուսը պետք է ծնված լինեն 1990 թվականի հունվարի 1-ից հետո և կարող են լինել բակալավրիատի առնվազն երրորդ կուրսի ուսանողներ: Նշված տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ 1 տարով:

**6.4.** **Խմբի** կատարողները կարող են լինել **Նախագծի** գիտական և գիտատեխնիկական բնագավառին առնչվող մասնագիտությամբ բակալավրիատի առնվազն առաջին կուրսի

ուսանողներ, եթե դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում 11-րդ կամ 12-րդ դասարաններում արժանացել են առնվազն երրորդ կարգի դիպլոմի:

**6.5.** **Խմբի անդամները** չեն կարող ընդգրկվել **Մրցույթին** ներկայացված մեկից ավելի **Հայտերում:**

**6.6.** **Խմբի անդամները** չեն կարող հանդիսանալ **Մրցույթի** շահառուներ, եթե արդեն իսկ հանդիսանում են ստորև նշված մրցույթներից երկուսի շահառու միաժամանակ.

- Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ (2023/2 թ.),
- «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024»,
- «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024»,
- «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր 2025»,
- «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025»,
- «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2024»,
- ««ADVANCE» հետազոտական դրամաշնորհային ծրագիր 2025»:

## 7. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

**7.1.** Կազմակերպությունը պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող **կամ** Ռազմարդյունաբերական համալիրի կազմից (այսուհետ՝ **Կազմակերպություն**):

**7.2.** **Կազմակերպությունը** պետք է ունենա **Նախագծին** առնչվող բնագավառում առնվազն երեք տարվա գործունեության փորձ:

**7.3.** **Կազմակերպությունը Նախագծի** իրականացման ընթացքում ապահովում է **Խմբի անդամների** հասանելիությունն առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

**7.4.** **Կազմակերպությունը** աջակցում է **Նախագծի** իրականացմանը:

**7.5.** **Կազմակերպությունը Խմբի ղեկավարին** տրամադրում է **Նախագծի** կարևորության, արդիականության և **Կազմակերպության** գիտական ուղղություններին համապատասխանության վերաբերյալ՝ **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացությունը: Եթե **Կազմակերպությունը** չունի գիտական խորհուրդ, ապա ներկայացվում է տվյալ բնագավառի Հայաստանի Հանրապետության որևէ այլ գիտական կազմակերպության գիտական խորհրդի եզրակացությունը:

**7.6.** Ծախսերի նախահաշվի (այսուհետ՝ **Նախահաշիվ**) «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված ֆինանսական միջոցներով **Կազմակերպության** ղեկավարն ապահովում է **Կազմակերպության** (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում **Նախագծի** կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

**7.7.** **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

**7.8.** Ձեռք բերված սարքերն ու սարքավորումները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում, տնօրինման իրավունքը պատկանում է **Կազմակերպությանը՝** հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործելու (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

**7.9.** **Նախագիծը** ֆինանսավորման երաշխավորվելուց հետո **Կազմակերպության, Կոմիտեի** և **Խմբի ղեկավարի** միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

## 8. Ակնկալվող արդյունքները

**8.1.** **Նախագծի** վերջնարդյունքը պետք է լինի Տեխնոլոգիաների պատրաստիության մակարդակներից (այսուհետ՝ **ՏՊՄ**) (Հավելված N 2.3) առնվազն **ՏՊՄ 5** ունեցող տեխնոլոգիական մշակում:

**8.2.** **Նախագծի** կատարման արդյունքում ակնկալվում է մասնակցություն՝ **ՌԱԿ** գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական (**ԳՀՓԿ**) ծրագրերին:

**8.3.** **Նախագծում** ներառված կազմակերպությունների միջև կարող են լինել համագործակցության հուշագրեր:

**8.4.** **Նախագծի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.

- *The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № _____).*

**Ուշադրություն. Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Նախագծի իրականացման արդյունք, հետևաբար՝ չի ընդունվի հաշվետվության մեջ:**

**8.5.** **Նախագծի** իրականացման ընթացքում **Խմբի անդամները** պետք է ապահովեն **Նախագծի** և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, հրապարակումներ գիտահանրամատչելի ամսագրերում, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն):

**8.6.** Սույն հրավերի «8.1.» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում **Կոմիտեի** հայտարարած մրցույթներին **Խմբի** անդամների ընդգրկմամբ հայտի գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի ղեկավարի** ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի** կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին ներկայացված հայտի գնահատականի նվազեցումը կչեղարկվի սույն հրավերի «**8.1.**» ենթակետով նախատեսված պայմանը բավարարելու մասին **Կոմիտե** ներկայացված տեղեկատվության հիման վրա:

## II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

**9. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը**

**9.1.** **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Խմբի ղեկավարը**՝ **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ **Համակարգ,** grants.hesc.am) միջոցով: **Հայտի** ուղարկման վերջնաժամկետը 2025 թվականի փետրվարի 28-ն է (**Հայտերի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

**9.2.** **Համակարգի** միջոցով **Հայտն** ուղարկելուց հետո **Խմբի ղեկավարը** թղթային տարբերակով **Կազմակերպություն** է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

- **Համակարգում** ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտի** տիտղոսաթերթը, **Նախահաշիվը**, **Խմբի ղեկավարի** դիմումը,
- **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի **Կազմակերպության** գիտական ուղղություններին **Նախագծի** համապատասխանության, կարևորության և

արդիականության վերաբերյալ հիմնավորում (եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի տվյալ բնագավառի ՀՀ որևէ այլ գիտական կազմակերպության գիտական խորհրդի եզրակացությունը),

- **Նախագծում** ներառված կազմակերպությունների ղեկավարներից գրություն այն մասին, որ ծանոթ են **Մրցույթի** հրավերի պայմաններին և համաձայն են, որ իրենց աշխատակիցները ներգրավվեն **Նախագծի** աշխատանքներում և պատրաստ են համագործակցել առնվազն **Նախագծի** շրջանակներում,
- **Խմբի անդամների** ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
- **Խմբի ղեկավարի** մասնագիտական կենսագրությունը (CV),
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից կամ **ՌԱԿ**-ից երկակի նշանակության ծրագրի իրականացման փաստը հավաստող փաստաթուղթ(եր) (անհրաժեշտության դեպքում),
- տարիքային շեմը բարձրացնելու համար՝ զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը:

**9.3.** Անհրաժեշտության դեպքում **Կոմիտեի** կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

**9.4.** **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) մինչև 2025 թվականի մարտի 7-ը ներառյալ, մեկ ընդհանուր փաթեթով, **Կազմակերպության** ղեկավարի գրությամբ (***Հավելված N 2.4***), աշխատանքային ժամերին, **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** կողմից ներկայացված բոլոր **Հայտերի** փաթեթները՝ առձեռն (Օրբելի եղբայրների փողոց 22, 8-րդ հարկ, 808 սենյակ):

**9.5.** **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեի** բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնից (հեռախոս՝ (010) 210140 / 105):

**Ուշադրություն. Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը: Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և ժամկետների, քննարկման ենթակա չեն:**

## 10. Նախահաշվի կազմությունը

**10.1. Նախահաշիվը** կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:

**10.2. Նախագծի** ֆինանսավորման առավելագույն չափը 24-ամսվա համար կարելի է նախատեսել առավելագույնը 40 000 000 (քառասուն միլիոն) դրամ:

**10.3. Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում **Խմբի** անդամների աշխատանքի ամսական վարձատրության (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:

**10.4.** Աշխատանքի վարձատրության գումարը սույն հրավերի «10.3.» ենթակետով չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:

**10.5. Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով (24 ամսվա համար) կարող է նախատեսվել մինչև 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ:

**10.6. Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր: Ծառայությունների մատուցման պայմանագրեր կարող է կնքվել միայն իրավաբանական անձանց հետ՝ համաձայնեցնելով **Կոմիտեի** հետ:

**10.7.** Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ:

**10.8. Խմբի** յուրաքանչյուր անդամի 2 և ավելի ամիս (12-ամսվա մեջ) բացակայության դեպքում պետք է գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ բացակայելուց առնվազն մեկ շաբաթ առաջ:

**10.9. Նախահաշվում** բոլոր ենթահոդվածների ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

**10.10. Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ:

## III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**11. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին**

**11.1. Կոմիտեն** ստուգում է՝

- **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- Բեալի ցանկերում *(Beall's list, https://beallslist.net/)* ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատությունների առկայությունը **Հայտում:**

**11.2. Հայտը չի քննարկվում, եթե՝**

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ նախագծի հետ,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթներին:

**11.3.** Ստուգման արդյունքները տրամադրվում են **Հայտերի** գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ **Խորհուրդ**):

**11.4. Խորհուրդը** քննարկում և հաստատում է փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

**11.5. Մրցույթի** պայմաններին չհամապատասխանող **Հայտը** գիտական փորձաքննության փուլ չի անցնում, որի մասին **Համակարգի** (grants.hesc.am) միջոցով տեղեկացվում է **Խմբի ղեկավարը**:

**12. Գիտական փորձաքննությունը**

**12.1. Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում և հաստատում է **Հայտերի** գիտական փորձաքննության առաջին, երկրորդ և երրորդ փուլերի գնահատման թերթիկները և վարման ընթացակարգը:

**12.2. Կոմիտեի**, **Խորհրդի և** ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի համապատասխան ենթահանձնաժողովների (այսուհետ՝ **Ենթահանձնաժողով**) անդամների կողմից **Հայտի** բովանդակության, փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

**12.3.** Գիտական փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը** գնահատում է **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը:

**12.4.** Գիտական փորձաքննության երկրորդ փուլում **Խորհուրդը** և **Ենթահանձնաժողովների անդամները** անցկացնում են հարցազրույց **Խմբի ղեկավարի** հետ և փորձագետը գնահատում է **Հայտը՝ Նախագիծը**:

**12.5.** Գիտական փորձաքննության երրորդ փուլում **Խորհուրդը** և **Ենթահանձնաժողովների** անդամները գնահատում են **Հայտը:**

## 13. Գիտական փորձաքննության առաջին փուլը (ընդարձակ ամփոփագրի գնահատում)

**13.1.** Գիտական փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը**, հաշվի առնելով **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը (Հավելված 2.5), **Խմբի ղեկավարի** և կատարողների գիտական հետագիծը (track record), մասնագիտական կենսագրությունները (CV), ներգրավված կազմակերպությունների գրությունները և համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, կոնսենսուսի սկզբունքով ձևավորում է առաջին փուլը հաղթահարած **Հայտերի** ցանկը, որոնք անցնում են գիտական փորձաքննության երկրորդ փուլ:

**13.2.** Գիտական փորձաքննության երկրորդ փուլ չանցած **Հայտերի Խմբերի ղեկավարները Համակարգի** (grants.hesc.am) միջոցով տեղեկացվում են այդ մասին:

## 14. Գիտական փորձաքննության երկրորդ փուլը

**14.1.** Գիտական փորձաքննության երկրորդ փուլում փորձագետը գնահատում է **Հայտը՝ Նախագիծը**, վերջինիս արդի վիճակը, նորույթը, **Կազմակերպությունում Նախագծի** իրականացման նախադրյալները, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, մեթոդաբանությունը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, **Խմբի ղեկավարի** և կատարողների մասնագիտական որակավորումը և համապատասխանությունը **Նախագծին**, տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

**14.2.** **Հայտը** գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:

**14.3.** Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկ:

**14.4.** Փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է փորձաքննության երկրորդ փուլի առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

**14.5.** Երկու փորձագետների գնահատականները փորձագետի առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** ենթարկվում է փորձաքննության երրորդ փորձագետի կողմից:

**14.6.** **Խորհուրդը** և **Ենթահանձնաժողովների անդամները Խմբի ղեկավարի** հետ անցկացնում են հարցազրույց:

**14.7.** Եթե **Խմբի ղեկավարը** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունից է, ապա հարցազրույցին պետք է ներկա լինի նաև **Խմբում** ՌԱՀ կազմակերպությունը ներկայացնող որևէ **կատարող**:

**14.8.** Յուրաքանչյուր **Հայտի** համար **Խորհրդի** և **Ենթահանձնաժողովների** անդամները լրացնում են հարցազրույցի գնահատման թերթիկ:

**14.9.** Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է փորձաքննության երկրորդ փուլի առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

**14.10.** Հարցազրույցի գնահատականը **Խորհրդի** և **Ենթահանձնաժողովների** անդամների գնահատականների միջին թվաբանականն է:

**14.11.** Փորձաքննության երկրորդ փուլի գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականի գումարն է:

## 15. Գիտական փորձաքննության երրորդ փուլը

**15.1.** Փորձաքննության երրորդ փուլում **Հայտերը** ուսումնասիրվում են **Խորհրդի** և **Ենթահանձնաժողովների** անդամների կողմից՝ նախագծերի՝ ռազմարդյունաբերական կարիքների համար կարևորությունը և կիրառությունը գնահատելու նպատակով: **Խորհրդի** և **Ենթահանձնաժողովների** կողմից կոնսենսուսի սկզբունքով գնահատվում են հայտերը: Յուրաքանչյուր հայտի գնահատականը 0-1 միավոր է (0.25 միավորի միջակայքով):

## 16. Գնահատման արդյունքները

**16.1.** Գիտական փորձաքննության գնահատականը ձևավորվում է **Մրցույթի** գիտական փորձաքննության երկրորդ փուլի արդյունքում ձևավորված գնահատականի և փորձաքննության երրորդ փուլի գնահատականի արտադրյալով:

**16.2.** **Հայտի** վերջնական գնահատականը ձևավորվում է **Մրցույթի** գիտական փորձաքննության գնահատականին հանելով/գումարելով **Մրցույթում Հայտի** առավելագույն գնահատականի 1-5 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի անդամների**՝ նախորդ մրցույթների «Ակնկալվող արդյունքների» կատարողականի հիման վրա:

**16.3.** **Կոմիտեն** գիտական փորձաքննության երկրորդ փուլ անցած **Հայտերի** վերջնական գնահատականների հիման վրա ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով և ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

**16.4.** **Խորհուրդը** հաստատում է **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը և **Կոմիտեի** նախագահին առաջարկում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը:

**16.5.** **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության նախագծերին աջակցության համար հատկացումների չափից և **Մրցույթի** արդյունքներից, որոշում է շեմային գնահատականը և **Նախարարի** հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և ֆինանսավորման չափը:

**16.6.** **Նախարարի** հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը, **Խմբերի ղեկավարների** ցուցակը և յուրաքանչյուր **Նախագծի** ֆինանսավորման չափը:

**16.7.** **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

**16.8.** **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տեղեկություններ՝ տվյալ **Կազմակերպությունից Մրցույթի** շահառու **Հայտերի** վերաբերյալ:

**16.9.** **Կոմիտեն Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Խմբի ղեկավարին** տրամադրում է **Հայտի** փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

## IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**17. Պայմանագրերի կնքումը**

**17.1.** **Կոմիտեի, Կազմակերպության** և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի Խմբի ղեկավարի** միջև կնքվում է **Համակարգում** ինքնաշխատ եղանակով կազմված **Պայմանագիր**:

**17.2.** **Խմբի անդամների** ամսական վարձատրությունն ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր.

- **Կազմակերպության** և **Խմբի ղեկավարի** միջև,
- **Կազմակերպության**, **Խմբի ղեկավարի** և կատարողի միջև:

Վերոնշյալ պայմանագրերի պատճենները **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) ներկայացնում է **Կոմիտե:**

**17.3.** **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

**17.4.** **Նախագծերը** իրականացվում են **Պայմանագրում** նշված ժամկետներում:

## 18. Հաշվետվությունը

**18.1.** **Նախագծի** իրականացման ընթացքում, ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը, **Խմբի ղեկավարը Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Կոմիտե** է ներկայացնում հաշվետվություն (ընթացիկ/ամփոփիչ), որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության կամ ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

**18.2.** Գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության գնահատման նպատակով, սահմանված կարգով, **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** ընթացիկ մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:

**18.3.** **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ **Խորհուրդը** պետք է հաշվի առնի նաև **Կոմիտեի** իրականացրած մշտադիտարկման արդյունքները:

**18.4.** Ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում **Նախագծի** հետագա ֆինանսավորումը կարող է դադարեցվել:

**18.5.** **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

## 19. Լրացուցիչ տեղեկություններ

**19.1.** Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Նախագիծ** և հաշվետվություն ներկայացնելու դեպքում

**Խմբի ղեկավարը** պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

**19.2.** **Խմբի ղեկավարը** կարող է դիմել **Կոմիտե Պայմանագրի** նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի ենթահոդվածներով տվյալ տարվա համար նախատեսված ծախսերի վերաբաշխում կատարելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան ձևաթղթով հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը: Վերաբաշխում կատարելու դեպքում **Կոմիտե** է ներկայացվում **Պայմանագրի** նախահաշվի փոփոխված տարբերակը: Նախագծի ավարտից 3 ամիս առաջ որևէ վերաբաշխում չի թույլատրվում:

**19.3.** **Խմբի ղեկավարի** կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ **Կազմակերպության** ղեկավարի միջնորդությամբ, **Կազմակերպության** գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և **Խմբի** կատարողների համաձայնությամբ, **Կոմիտեի** գրավոր թույլտվությամբ կարելի է կատարել **Խմբի ղեկավարի** փոփոխություն: **Խմբի ղեկավարի** փոփոխության դեպքում կնքվում է նոր **Պայմանագիր**:

**19.4.** **Խմբի ղեկավարը** կարող է դիմել **Կոմիտե** կատարողի համարժեք փոփոխություն կատարելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Կատարողի փոփոխություն կատարելու դեպքում **Կոմիտե** է ներկայացվում նոր կատարողի հետ դրամաշնորհի շրջանակներում կնքված պայմանագրի պատճենը: Նախագծի ավարտից 3 ամիս առաջ կատարողի փոփոխություն չի թույլատրվում:

**19.5.** **Խմբի ղեկավարը** կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողների թիվը մեկով կրճատելու (եթե 4 անդամից բաղկացած խումբ չէ) միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Կատարողների թվի կրճատման դեպքում կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով ամրագրվում է **Պայմանագրի** գնի փոփոխությունը:

**19.6.** **Խմբի ղեկավարը** կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողի աշխատանքի վարձատրությունը մինչև երեք ամիս տևողությամբ դադարեցնելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումը և **Խմբի ղեկավարի** համաձայնությունը: Եռամսյա ժամկետում կատարող չընդգրկելու դեպքում կատարողների թիվը կրճատվում է մեկով և կնքվում է **Պայմանագրի** գնի (ներառյալ երեք ամսվա աշխատանքի վարձատրության գումարը) փոփոխության մասին համաձայնագիր: Կատարող ընդգրկելու դեպքում

**Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում ավելացած գումարը **Խմբի ղեկավարը** կարող է վերաբաշխել Պայմանագրի հոդվածների միջև:

**19.7. Խմբի անդամների**՝ Հայաստանի Հանրապետությունից երկու ամսից ավելի բացակայելով հանդերձ **Նախագծում** աշխատանքները շարունակելու համար դեպքերը պետք է նախապես գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ:

## 20. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

**20.1. Կոմիտեն** կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում կատարվել է վերաբաշխում առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության,
- **Խմբի** կազմում կատարվել է փոփոխություն առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության,
- սահմանված ժամկետում չի ներկայացվել ընթացիկ հաշվետվությունը կամ հաշվետվության վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Խմբի** անդամներից որևէ մեկը 12 ամսվա ընթացքում երկու և ավել ամիս բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

## 1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3 Ֆիզիկա և աստղագիտություն

1.4 Քիմիա

## 2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5 Քիմիական տեխնոլոգիաներ

2.6 Նյութագիտություն

2.10 Նանոտեխնոլոգիա

# ՆԱԽԱԳԻԾ

*Ներկայացնել հայերեն, մինչև 13 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.*

***1. Նախագծի անվանումը***

***2. Անոտացիա***

***3. Արդի վիճակի վերլուծություն***

***4. Նպատակները և խնդիրները***

***5. Հետազոտական նախագիծը (մինչև 5 էջ)***

***6. Իրականացման եղանակները, մեթոդները***

***7. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)***

***8. Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները***

**9. *Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

***10. Ակնկալվող արդյունքը***

- ☐ նոր տեխնոլոգիա
- ☐ կատարելագործված տեխնոլոգիա (տեխնոլոգիական գործընթաց)
- ☐ ծրագրային փաթեթ
- ☐ նախատիպ կամ մոդել
- ☐ փորձնական կամ լաբորատոր նմուշ
- ☐ այլ

***11. Ներկայացման պահին Տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակը (Current technology readiness level, TRL)***

1. Հիմնական սկզբունքները հետազոտված են ☐
2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է ☐
3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում ☐
4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում ☐
5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում ☐

6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում ☐

7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում ☐

8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին ☐

***12. Նախագծի ավարտին ակնկալվող տեխնոլոգիայի պատրաստության մակարդակը (Output technology readiness level, TRL)***

1. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում ☐
2. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում ☐
3. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում ☐
4. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին
5. Արտադրանքը շուկայում է ☐

***13. Ակնկալվող արդյունքի՝***

***1) տեխնիկական ցուցանիշները***

***2) քանակական և որակական ցուցանիշները*** *(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))*

***3) Նմանակների հետ համեմատության ցուցանիշները՝***

հիմնական տեխնիկական առավելությունները և/կամ թերությունները

հիմնական տնտեսական առավելությունները և/կամ թերությունները

այլ

***14. Օգտագործված գրականության ցանկը***

*Հավելված N 2.3*
*«Երկակի նշանակության գիտական*
*նախագծեր 2025» մրցույթի հրավերի*

## ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ (TRL)

ՏՊՄ 1. Հիմնական սկզբունքները հետազոտված են

ՏՊՄ 2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է

ՏՊՄ 3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում

ՏՊՄ 4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում

ՏՊՄ 5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում

ՏՊՄ 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում

ՏՊՄ 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում

ՏՊՄ 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին

ՏՊՄ 9. Արտադրանքը շուկայում է

*Հավելված N 2.4**
*«Երկակի նշանակության գիտական*
*նախագծեր 2025» մրցույթի հրավերի*

N _____ «____» _____ 2025 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հայոցյան,

Խնդրում եմ ընդունել «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025» մրցույթին _____ (Կազմակերպության անվանումը) - ից ներկայացված _____ ծածկագր(եր)ով հայտ(եր)ը:

Կազմակերպության ղեկավար _____ _____
*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

* *Հավելված N 2.4-ով առաջարկվող տեքստը ներկայացնել Կազմակերպության ձևաթղթով:*

## Նախագծի վերնագիրը

| |
|---|
| |

## Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է գիտական փորձաքննության առաջին փուլում: Այն պետք է ներկայացնել և՛ անգլերեն, և՛ հայերեն մինչև 2 էջ:

Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի **Նախագծի** հակիրճ տարբերակը և շեշտադրի հետազոտության կարևորությունն ու նպատակահարմարությունը:

| |
|---|
| |